կացի Բաշարաթ սարկաւագին և իւր ծնողացն Միրիջանին, Մարգարտին և քեռերցն. Փաշաջանին և Դուլումին, եղբաւրն Յակոբին և հօրեղբօրն Եփրեմիանոսին։ ...Մղտսի Բաշարաթ կոչեցեալ որ էր նա ի կողմանցն Միջագիտաց, ի յերկրէն Մարաց, ի նահանգէն Կորդուաց ի յիշխանանիստ գաւառէն Մոկաց, ի քաղաքի մեծ Թաղէն զոր Սեռնի (Մէյտան) կոչած. ի տոհմէ Ասպահանից առաւած բարձեալ ի յուս խաչն Ցի. դիմեալ յերուսաղէմ Ծ. ամ յօժար սիրով ծառայելով սբ. Երուսաղիմայ ըզկարգաւորացն զեկեղեցւոյ պաշտօն կատարելով սրբութեանցն...վասն որոյ սկսաւ առնել յիշատակ յարդար և ի հալալ վաստակոց իւրոց, ետ գրել Բ. պատուական ոսկեպատ գեղեցկագիր աւետարան և արծաթէ ոսկեզօծ խաչ մի և արծաթէ ոսկեզօծ մասին տուփ մի և գիրք մի, որ ոսկեփոր ասեն և այլ որչափ որ ունէր ինչ ի մանկութենէ ժողովեալ էր, ետուր զամենայն ի նորոգումն եկեղեցեայն սբ. Երուսաղէմի...»։ (Խապ. Ցուց. տետր Զ. էջ 439-441)։

ԲԱՌՆԱԲԱՍ ՎՐԴ. ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, ԳԱՆԶԱԿԵՑԻ Մբ.— Ծ. 1811, աւազանի անունը Պետրոս, Զռ. 1857, ՏՅՊ. 1861, անդամ Տն. Ժող.ի 1862, ՏԴ. 1866, պետական ծախքով և օժանդակութեամբ Ս. Յակոբի վանքին շինել կուտայ Դամասկոսի այրեցաւեր Ս. Սարգիս եկեղեցին 1866ին, կը հրաժարի Միաբանութենէն 1876ին և կը մեկնի Ս. Էջմիածին։ Հրատարակած է Յաջորդութիւն պատրիարքաց Երուսաղէմի գիրքն (տպ. 1872 Կ. Պոլիս)։

ԲԱՍԻԼԻՈՍ կամ ՎԱՍԻԼ ՊԵ.—(1353-1356) (ՄՁ. թ. 282) ձեռագիր ճառընտրին Վերջաբանութիւն արքոյն Թեկրի կուսի աշակերտի Պաղոսի Առաքելոյն ճառին սկզբնաւորութեան էջին տակ տարբեր գրչով, գրուած է հետեւեալ ծանօթութիւնը Բասիլիոս կամ Վասիլ Պե. մահուան վրայ. «ի թվ. Պե (1356) ի սեպտեմբերի դ.ի տօն է սբ. կուսի Թեկղայ հանօ? (հանգեաւ) ի Քս. ընդ բարեձեւութեամբ զարդարեալ հոգւով և մարմնով տր. Բասիլիոս եպսկ. Էմայ. զոր և տր. Յս. դասակից և մանակից աքսացէ ընդ սբ. հայրապետան, զկացողքս և զամ. զնացողքն»։

ԲԱՐԹՈՂ ԹԵԼԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.—Ծ. 1839ին, յիսուն տարիի չափ, իբր քարտուղար և դիւանապետ ծառայած է Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի։ Քննչութեան պաշտօնով այցելած է Ս.